ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1995-2001 ԹԹ.

ԱՐՇԱԿՅԱՆ Գ.Մ.

Թուրքիան, հրաժարվելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՀՀ-ի հետ, այնուամենայնիվ, 1990-ականների սկզբին, ելնելով Հարավային Կովկասում իր ռազմավարական, քաղաքական և տնտեսական նպատակներից, որոշակի քայլեր ձեռնարկեց բարելավելու ՀՀ-ի հետ հարաբերությունները, հատկապես առևտրատնտեսական ոլորտում: Սակայն Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի հաղթանակները Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում հակահայկական տրամադրություններ առաջացրին, և 1992 թ. փետրվարից սկսած՝ ԼՂ հիմնահարցը դարձավ կարևոր քաղաքական գործոն ՀՀ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում, որի հետևանքով Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը սկսեց պայմանավորել հիմնականում այդ հիմնահարցում առաջընթացով:

1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանի միջնորդությամբ ղարաբաղյան հիմնահարցում հակամարտող կողմերի միջև հրադադարի հաստատումից հետո Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերը զգալիորեն ուժեղացան: Այդպիսով, փաստորեն, կասկածի տակ դրվեցին Հարավային Կովկասում ՌԴ-ի ազդեցությանը հակակշռելու և հայ-ադրբեջանական հակամարտությունում որոշիչ դեր խաղալու Թուրքիայի հնարավորությունները:

Ահա այս համատեքստում ուշագրավ էին Թուրքիայի քաղաքական դիրքորոշման փոփոխության դրսևորումները, մասնավորապես ՀՀ-ի հետ փոխհարաբերություններում բարելավման միտումներ հանդես բերելը: Անկարայի կողմից հայ-թուրքական հարաբերությունների բարելավման փորձերի շրջանակներում տպավորիչ էր 1995 թ. փետրվարին Թուրքիայի ԱԳ նախարար Մ. Քարայալչընի հայտարարությունը, ըստ որի՝ Թուրքիան դեմ չէր ՀՀ տարածքով կասպիական նավթամուղի անցկացման հնարավորությանը[1]:

ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության փոփոխությունների համատեքստում ուշագրավ է այն փաստը, որ 1995 թ. փետրվարին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռ. Հոլբրուքը Անկարայում ՀՀ-ի հետ փոխհարաբերությունների բարելավման կոչով դիմեց Թուրքիայի ղեկավարությանը, որը խիստ արձագանք ստացավ Ադրբեջանում: Մասնավորապես, այդ կապակ-

---

[1] **Демоян Г.** *Турция и Карабахский конфликт, Е., 2006, с. 78; Независимая газета,18.02.1995.*

ցությամբ 1995 թ. փետրվարի 27-ին Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևի խորհրդական Վ. Գուլուզադեն հայտարարել էր. «Քանի դեռ հայերը դուրս չեն եկել Ադրբեջանի գրավյալ տարածքներից, Երևանի հետ հարաբերությունների կարգավորումը Թուրքիայի կողմից դավաճանություն է ադրբեջանցիների նկատմամբ»[2]: Հատկանշական է, որ Թուրքիան ոչ միայն տեղի չտվեց ադրբեջանական հայտարարությանը, այլև զայրույթով պատասխանեց Բաքվի արձագանքին՝ ընդգծելով, որ «Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քմահաճույքով չի առաջնորդվում»[3]:

Ի պատասխան 90-ականների երկրորդ կեսին Թուրքիայի կողմից ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավման փորձերին և հայտարարություններին՝ ՀՀ իշխանությունները ևս ընդառաջ քայլեր ձեռնարկեցին: Մասնավորապես, 1995 թ. փետրվարին ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավոր խորհրդական, հատուկ հանձնարարություններով դեսպան Ժ. Լիպարիտյանի գլխավորությամբ հայկական պատվիրակությունը ժամանեց Թուրքիա՝ մասնակցելու Անկարայում անցկացված «Անվտանգությունը, կայունությունը, բարգավաճումը և անկախությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում» միջազգային գիտական կոնֆերանսին, որին մասնակցում էին նաև Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Եվրամիության և ԵԱՀԿ Մինսկի խմբի պաշտոնական ներկայացուցիչներ[4]: Թուրքիա կատարած այցի ընթացքում հայկական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի, վարչապետ Թ. Չիլերի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում շոշափվեցին երկկողմ հարաբերություններին առնչվող խնդիրներ[5]: Ըստ թուրքական «Հյուրիյեթ» թերթի՝ Ս. Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի նախագահը նշեց, որ եթե հայերը հետ քաշվեն գրավված ադրբեջանական տարածքներից և Շուշի քաղաքից, Թուրքիան կարձագանքի ՀՀ-ի ակնկալիքներին[6]:

1995 թ. մարտին Կոպենհագենում ՄԱԿ-ի կազմակերպած սոցիալական զարգացումների և հիմնախնդիրների գագաթաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Ս. Դեմիրելի և Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպումը. Ս. Դեմիրելը, ՀՀ նախագահին ներկայացնելով ԼՂ հակամարտության հետևանքով Թուրքիային հասցրած վնասները, ընդգծեց, որ այս հակամարտությունը խանգարում է Թուրքիային Միջին Ասիա դուրս գալ, ինչպես և ուշացնում է նավթամուղի ծրագրի իրականացումը: Նշելով, որ Ադրբեջանի հետ խնդիրների լուծման դեպքում Թուրքիան ՀՀ-ին կարող է անհրաժեշտ օգնություն ցույց տալ, Ս. Դեմիրելը նշեց.

---

[2] **Չաքրյան Հ.,** *Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Ե., 1998, էջ 38:*

[3] *Cumhurijet, 25.02.1995.*

[4] *Azg, 21.02.1995:*

[5] *Azg, 28.02.1995:*

[6] *Hürriyet, 01.03.1995.*

«Ի՞նչ վատ կլինի, եթե նավթամուղն անցնի ձեր երկրով: Լուծեք ձեր խնդիրներն Ադրբեջանի հետ: Դրանք վնաս են հասցնում մեզ»[7]:

ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1995 թ. ապրիլին Թուրքիայի կառավարության որոշումը՝ բացել իր օդային տարածքը դեպի ՀՀ և այնտեղից ուղևորվող օդանավերի համար[8]: Այդ կապակցությամբ 1995 թ. մայիսի 20-ին Թուրքիայի արտգործնախարարությունը հանդես եկավ պաշտոնական հայտա-ռարությամբ, որտեղ մասնավորապես նշվում էր. «Թուրքիայի կառավա-րությունը որոշել է վերաբացել H-50 օդային միջանցքը, որը փակվել էր 1993 թ. սկզբին դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս բոլոր թռիչքների համար»[9]: Թուրքիայում մեծ արձագանք ստացավ նաև 1995 թ. հունիսի 27-29-ին Ստամբուլի Էսենյուրթի շրջանի քաղաքապետ Գ. Չափանի պատվիրակության այցը Երևան, և մասնավորապես նրա այցելությունը Եղեռնի զոհերի հուշահամալիր՝ որպես հարգանքի տուրք[10]: Սա առաջին և մինչ օրս միակ դեպքն է, երբ Թուրքիայի պաշտոնատար անձն այցելել է Ծիծեռնակաբերդի Եղեռնի զոհերի հուշահամալիր:

Թուրքիայի և ՀՀ-ի հարաբերությունների միջև առկա խոչընդոտները հաղթահարելու նպատակով ՄԱԿ-ի 50-ամյակի շրջանակներում Նյու Յորքում կազմակերպված միջոցառումների ժամանակ ՄԱԿ-ի թուրքական ներկայացուցչությունում տեղի ունեցավ Ս. Դեմիրելի և Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպումը. քննարկվեցին հայ-թուրքական հարաբերությունների բարելավման և ԼՂ հիմնահարցի կարգավորմանն առնչվող մի շարք հիմնախնդիրներ: Թուրքիայի նախագահը մասնավորապես նշեց, որ ՀՀ-ի և Թուրքիայի միջև հարաբերություններն ավելի արդյունավետ կլինեն, եթե ՀՀ-ն իր զորքերը հեռացնի Ադրբեջանի գրավյալ տարածքներից, մասնավորապես Լաչինի միջանցքից, ինչից նա մեծ օգուտ կքաղի՝ հավելելով, որ Լաչինի միջանցքից զորքերի հեռացումը խիստ կարևոր է Թուրքիայի համար, և այնտեղից մի բուռ զորքի հեռացումը Թուրքիան կընդունի իբրև համագործակցության նշան հայկական կողմից[11]:

Այսպիսով, թեև որևէ էական տեղաշարժ չկար ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականություն մեջ, այնուամենայնիվ, 90-ականի երկրորդ կեսից հայ-թուրքական շփումներն ավելի ինտենսիվ բնույթ ստացան և, ինչպես թուրքական քաղաքական շրջանակները, այնպես էլ նրանց լրատվամիջոցներն ավելի մեծ

---

[7] *«Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը», - Եվրոպական կայունության նախաձեռնություն (ESI), 2009, էջ 23:*

[8] **Akdeniz B.** *Karabagh Conflict and Its Effects on Turkey's Role in the Caucasus, Naval Postgraduate School, Monterey, California, p. 61;* **Özbay F.** *Türkiye- Ermenistan İlişkileri, BILGESAM. Rapor No 25, 2011, s. 4.*

[9] *ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա. Ժամանակագրություն, էջ 7:*

[10] **Չաքրյան Հ.,** *նշվ. աշխ, էջ 34:*

[11] *Ազգ, 26.10.1995:*

ուշադրություն դարձրին երկկողմ հարաբերություններին և դրանց զարգացման հնարավորությանը:

Թուրքիայի և ՀՀ-ի միջև առկա խոչընդոտները հաղթահարելու և երկկողմ հարաբերությունները բարելավելու նպատակով 1996 թ. սեպտեմբերի 30-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանը հանդիպեց Թուրքիայի փոխվարչապետ և ԱԳ նախարար Թ. Չիլերի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հիմնահարցը: Թ. Չիլերը, մասնավորապես, բավականին ուշագրավ հայտարարությամբ հանդես եկավ՝ նշելով, որ Թուրքիան պատրաստ էր ՀՀ-ի հետ հարաբերություններ հաստատել, անգամ բացել սահմանը, եթե ՀՀ-ն գոնե չնչին զիջումներ կատարեր ԼՂ հարցում[12]:

Թեև Թուրքիան խուսափում էր ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, այնուամենայնիվ, շարունակում էր ուղղակի շփումները ՀՀ-ի պաշտոնական շրջանակների հետ: Մասնավորապես 1997 թ. փետրվարի 26-28-ին ՀՀ ժամանեց Թուրքիայի արտգործնախարարության պատվիրակությունը՝ բաղկացած Թուրքիայի ԱԳՆ Կովկասի դեպարտամենտի փոխտնօրեն Ա. Էրօզանից և Ռուսաստանում Թուրքիայի դեսպանության երրորդ քարտուղար Օ. Էրգյունից: Այցելության շրջանակում թուրք դիվանագետները հանդիպեցին ՀՀ ԱԳ փոխնախարարներ Վ. Օսկանյանի և Ս. Մանասարյանի հետ. կողմերը քննարկեցին հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հակամարտության շուրջ ընթացող գործընթացները: Նրանք պայմանավորվեցին շարունակել երկու երկրների ԱԳՆ-ների մակարդակով հանդիպումները, ինչպես նաև փոխանակել երկկողմ հարաբերություններին առնչվող պայմանագրերի և արձանագրությունների նախագծեր[13]:

Թուրքիայի և ՀՀ-ի միջև քաղաքական շփումներին զուգընթաց՝ զարգանում էին նաև հայ-թուրքական տնտեսական շփումները: Այս համատեքստում, անդրադառնալով ՀՀ-ի և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերությունները զարգացնելու և երկկողմ միջպետական կապեր հաստատելու փորձերին, կարևորվում է 1996 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 1-ը «Հրազդանմաշ» գործարանի տնօրեն, ՀՀ ԱԺ պատգամավոր Թ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հայ գործարարների պատվիրակության այցը Թուրքիա. տեղի ունեցան մի շարք կարևոր հանդիպումներ Թուրքիայի գործարար և քաղաքական շրջանակների հետ: Մասնավորապես, հուլիսի 29-ին Թ. Տեր-Պետրոսյանը հանդիպեց Թուրքիայի Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Թ. Թյուրքեշի հետ, որը թուրք հայտնի ազգայնական Ա. Թյուրքեշի որդին էր: Հանդիպման ընթացքում Թ. Թյուրքեշը

---

[12] Հայաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Ե., 2005, էջ 110:

[13] ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա. Ժամանակագրություն, էջ 8:

հանդես եկավ ուշագրավ կառուցողական հայտարարությամբ՝ նշելով, որ Թուրքիան և ՀՀ-ն տարածաշրջանի երկու կարևոր երկրներն են, ուստի ամեն առիթով և ամեն տեղ կողմերի երկխոսությունը նպաստելու է տարածաշրջանի խաղաղությանը և համագործակցությանը[14]: Այցելության շրջանակներում Թ. Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության հանդիպումը Ստամբուլի Էսենյուրթ շրջանի քաղաքապետ Գ. Չափանի և թուրքական գործարար շրջանակների հետ անցավ բավական ջերմ մթնոլորտում[15]:

Թուրքիայի և ՀՀ-ի միջև ընթացող ակտիվ տնտեսական շփումների շրջանակում հատկապես ուշագրավ էր տնտեսական հարաբերություններն ակտիվացնելու և երկկողմ գործարար շրջանակների համագործակցությունը խթանելու նպատակով 1997 թ. մայիսին Ստամբուլում՝ Սևծովյան տնտեսական համագործակցություն կազմակերպության շրջանակներում անցկացվող բիզնես-խորհրդի նիստի ժամանակ Ա. Ղազարյանի և Ք. Սոյաքի նախագահությամբ հայ-թուրքական և թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովների հիմնադրման փաստը: Ըստ հանձնաժողովի հիմնադիրների, թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովի աշխատանքներն ուղղված էին երկու երկրների միջև տարերայնորեն զարգացող առևտրատնտեսական կապերի համակարգմանը և դրանց ավելի կազմակերպված բնույթ հաղորդելուն, ինչպես նաև ՀՀ-ի և Թուրքիայի միջև երրորդ երկրների միջոցով ծավալվող առևտրի զարգացմանը: Այդ նպատակով հանձնաժողովը ջանում էր ապահովել հայ և թուրք գործարարների միասնական գործունեու-թյունը տնտեսական ասպարեզում[16]:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ, չնայած հայ-թուրքական և թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովները ջանքեր էին գործադրում՝ ակտիվացնելու հայ-թուրքական գործարար շրջանակների համագործակցությունը և նպաստելու հայ-թուրքական սահմանի բացմանը, Թուրքիան շարունակում էր ՀՀ-ի հանդեպ վարել իր որդեգրած նախկին քաղաքականությունը, ինչի վառ ապա-ցույցն էր 1997 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի ելույթը Կարսում, որտեղ անդրադառնալով հայ-թուրքական սահմանի բացմանը՝ նա այդ հարցը պայմանավորել է «Ադրբեջանի գրավյալ տարածքներից հայկական զորքերի լիակատար դուրսբերման հետ: Նա մասնավորապես հայտարարեց, որ Թուրքիայի և ՀՀ-ի միջև սահմանային դռան բացումը քաղաքական խնդիր է և մի քանի գրոշա-նոց առևտրի համար իրենք ադրբեջանցիներին դժվար կացության մեջ չեն գցելու»[17]:

---

[14] *Ազգ, 31.07.1996:*

[15] **Արշակյան Գ.,** *Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Ե., 2009, էջ 81:*

[16] **Goshgarian R.** *Breaking the Stalemate: Turkish-Armenian Relations in the 21st Century,-Turkish Policy Quarterly, Vol 4, No. 4, Winter 2005, p. 6-7.*

[17] *Ազգ, 01.11.1997:*

Այսպիսով, կարող ենք նշել, որ հայ-թուրքական մերձեցման միտումները որևէ էական արդյունքի չհանգեցրին: Ինչպես նախկինում, այնպես էլ 90-ականների երկրորդ կեսին Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմանավորել հիմնականում ադրբեջանական գործոնով և Լ.Ղ. հիմնահարցի կարգավորված չլինելով՝ միաժամանակ ջանալով պահպանել երկկողմ շփումները և երկխոսության հնարավորությունները:

Բացասաբար մոտենալով ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը՝ Թուրքիայի քաղաքական շրջանակներն ակնհայտ շահագրգռվածություն էին ցուցաբերում ՀՀ-ում Լ. Տեր-Պետրոսյանի իշխանության պահպանմամբ: Մինչև 1998 թվա-կանը ՀՀ-ի հանդեպ «մեղմ» քաղաքականության շնորհիվ Թուրքիան պահպանում էր «չնչին երկխոսության» պատրանք, որի հիմ-քում ընկած էին առևտրատնտեսական հարաբերությունների հեռանկարով ՀՀ-ին հրապուրելու և Հարավային Կովկասում իր քաղաքական ակտիվությունն ամրապընդելու Անկարայի ձգտումները: ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականն անորոշության մեջ գցեց Թուրքիային:

Ուշագրավ է թուրքական պաշտոնական շրջանակների անմիջապես արձագանքը նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականի կապակցությամբ: Պետնախարար Ա. Անդիջանն այս ամենը որակել էր որպես Բաքու-Ջեյհան խողովակաշարի կառուցման թշնամիների ձեռքի գործ, որը վտանգելու էր կայունությունը Կովկասում[18]:

Թուրքական լրատվամիջոցները նույնպես ակտիվորեն քննարկեցին ՀՀ-ում կատարված փոփոխությունները: Այս առնչությամբ թուրքական «Հյուրրիյեթ» օրաթերթի գործադիր տնօրեն Է. Օզքյոքը փետրվարի 14-ի համարում Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականը վերջին տարիների թուրքական արտաքին քաղաքականության խոշորագույն ձախողումը համարեց: Նա մասնավորապես գրել էր, որ Թուրքիան պետք է աջակցեր Լ. Տեր-Պետրոսյանի պես չափավոր նախագահին, այլ ոչ թե նրան իր ճակատագրին դեմ հանդիման թողներ[19]: Իսկ թուրք գիտնական Մ. Աքթաշի կարծիքով. «Թուրքիան Տեր-Պետրոսյանի հրաժարականով կորցրեց իր խոշորագույն հաղթաթուղթը: Լ. Տեր-Պետրոսյանը Թուրքիայի համար մեծ շանս էր»[20]:

Հավելենք, որ ՀՀ նախագահի հրաժարականից հետո ՀՀ-ում կայացած արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքին մասնակցելու նպատակով Թուրքիայից ՀՀ ԵԱՀԿ-ի շրջանակներում ժամանեցին թուրք պատգամավոր դիտորդներ և լրագրողներ, որոնք ընտրությունների ընթացքն ակտիվորեն լուսաբանեցին իրենց պարբերական մամուլում: Մասնավորապես, 1998 թ. մարտի 13-ին Ստամբուլից Երևան ժամանեց թուրքական պատվիրակությունը, որի

---

[18] Turkish Daily News, 15.02.1998.
[19] Hürriyet, 14.02.1998.
[20] Նույն տեղում:

կազմում էին Եվրախորհրդի դիտորդ, ԹԱՄԺ-ի պատգամավոր Ջ. Քամիին, ԵԱՀԿ դիտորդ, պատգամավոր Թ. Էներեմը, ինչպես նաև այլ քաղաքական գործիչներ և լրագրողներ, որոնք հանդիպումներ ունեցան նախագահի թեկնածուների հետ, այցելեցին տարբեր ընտրատարածքներ: Պատգամավոր Ջ. Քամիին ընդունեց ԱԳ նախարարի պաշտոնակատար Վ. Օսկանյանը, այնուհետև՝ ՀՀ նախագահի պաշտոնակատար, վարչապետ Ռ. Քոչարյանը: Վ. Օսկանյանի հետ հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգաց-մանը վերաբերող հարցեր: Թուրք պատգամավորը մասնավորապես հույս էր հայտնել, որ անկախ նրանից, թե ով կլիներ նորընտիր նախագահը, նա պետք է քաջ գիտակցեր հայ-թուրքական հարաբերությունների զարգացման անխուսա-փելիությունը[21]: Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո Ռ. Քոչարյանի ընտրությունը նախագահի պաշտոնում, ինչպես նաև Թուրքիայում ներքաղա-քական սուր պայքարն իրենց ուղղակի անդրադարձն ունեցան Թուրքիա–ՀՀ հարաբերությունների վրա:

Թեև Թուրքիայի քաղաքական և հասարակական շրջանակները բավական ցավագին ընդունեցին Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականը և Ռ. Քոչարյանի նախագահ ընտրվելը, այնուամենայնիվ, Թուրքիայի ղեկավար շրջանակները փորձեցին համագործակցության եզրեր գտնել ՀՀ նոր ղեկավարության հետ և ակտիվացնել երկկողմ շփումները: Այդ նպատակին էր ուղղված հատկապես 1998 թ. ապրիլի 10-ին Ս. Դեմիրելի շնորհավորական ուղերձը ՀՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանին[22]:

Չնայած դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը՝ ՀՀ-ի և Թուրքիայի միջև քաղաքական և դիվանագիտական շփումները շարունակվեցին, որի ընթացքում երբեմն փորձեր արվեցին փոխօգնության եզրեր գտնել: Մասնավորապես 1999 թ. օգոստոսի 16-ին Թուրքիայում տեղի ունեցած ուժգին երկրաշարժի կապակցությամբ աշխարհի տարբեր երկրներից ցավակցական ուղերձներ հղվեցին, և օգնություն ուղարկվեց Թուրքիա: ՀՀ-ն նույնպես ցավակցեց և օգնության պատրաստակամություն հայտնեց: Ռ. Քոչարյանն օգոստոսի 17-ին ցավակցական նամակ էր հղել Ս. Դեմիրելին, որտեղ իր ցավակցությունն էր հայտնում զոհվածների ընտանիքներին ու մերձավորներին[23]:

1999 թ. օգոստոսի 17-ին՝ նախ Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ն. Շենտ-յի, ապա հաջորդ օրը Թուրքիայի արտգործնախարարի առաջին տեղակալ Ք. Հաքթամիրի հետ հեռախոսազրույցի ընթացքում ՀՀ արտգործնախարարի տեղա-կալ Ա. Բայբուրդյանը ցավակցություն հայտնեց և նշեց, որ ՀՀ-ն պատրաստ է մի քանի ժամվա ընթացքում Թուրքիա ուղարկել փրկարար ջոկատներ և անհրաժեշտ

---

[21] *Ազգ, 17.03.1998:*

[22] *ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուց. 3, գ. 159, էջ 68:*

[23] *ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուց. 5, գ. 243, էջ 191:*

սարքավորումներով ու իրերով բեռնավորված մի ինքնաթիռ: Սակայն օգոստոսի 19-ին Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ն. Շենսոյը զանգահարել էր Ա. Բայբուրդյանին և տեղեկացրել, որ Թուրքիայի իշխանությունները շնորհակալություն են հայտնում ցավակցական նամակի ու օգնության առաջարկի համար և հայտնում են, որ ներկայումս փրկարար աշխատանքներում ընգդրկված էին բավարար թվով մարդիկ, և հայ փրկարարների կարիքը չէր զգացվում[24]:

1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ-ում տեղի ունեցած ողբերգական դեպքերի կապակցությամբ ՀՀ նախագահին, ի թիվս այլ պետությունների ղեկավարների, ցավակցական ուղերձներ էր հղել Թուրքիայի ղեկավարությունը: Ռ. Քոչարյանին ուղարկած իր ցավակցական ուղերձում Թուրքիայի նախագահն իր ցավակցություններն էր հղել հայ ժողովրդին և ցանկացել էր արագ վերականգնում գրոհի ժամանակ վիրավորվածներին[25]:

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչական գործողության հետևանքով խորհրդարանում զոհված ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանի, ՀՀ ԱԺ նախագահ Կ. Դեմիրճյանի և մյուս զոհերի հուղարկավորությանը մասնակցելու նպատակով հոկտեմբերի 31-ին Թուրքիայից ժամանեց պատվիրակություն, որի կազմում էին պետնախարար Մ. Ալի Իրթեմչելիքը, Թուրքիայի խորհրդարանի խոսնակի ներկայացուցիչ Ա. Ըլըքսոյը և Թուրքիայի ԱԳՆ ներկայացուցիչ Ռ. Չեվիքոզը: Այցի ընթացքում թուրքական պատվիրակությունը հանդիպեց ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի հետ. թուրքական պատվիրակության ղեկավար Իրթեմչելիքն ասաց, որ ՀՀ-ն Թուրքիայի հարևանն է, և նրա դեմ որևէ նախապաշարմունք չկա: Եթե միջազգային հանրության սպասելիքների ուղղությամբ ՀՀ-ն դրական քայլեր ձեռնարկի, ապա կփոխվի մթնոլորտը Կովկասում, կայունությունից և համագործակցությունից կշահեն տարածաշրջանի բոլոր երկրները: Թուրքիան ցանկանում է, որ այս ուղղությամբ առաջխաղացում լինի[26]: Նման մակարդակով թուրքական կողմը երբևէ Հայաստանի Հանրապետություն չէր այցելել:

Չնայած Թուրքիայի և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության փաստին, այնուամենայնիվ, Թուրքիայի և ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների միջև հանդիպումներն ու շփումները շարունակվում էին: Այս համատեքստում հատկապես ուշագրավ էր 1999 թ. նոյեմբերի 18-19-ին Ստամբուլում ԵԱՀԿ գագաթաժողովի շրջանակներում Ս. Դեմիրելի և Ռ. Քոչարյանի հանդիպումը: Հանդիպման ընթացքում Թուրքիայի նախագահը, նշելով, որ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կախված է ՀՀ-ի և Ադրբեջանի միջև հակամարտության լուծումից, մասնավորապես ասաց, որ Թուրքիան ցանկանում է խաղաղություն տարածաշրջանում, և եթե խաղաղություն

---

[24] Նույն տեղում, էջ 353:

[25] ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուց. 5, գ. 243, էջ 366:

[26] Նույն տեղում, էջ 369:

հաստատվի, այն նպաստելու է Թուրքիայի, ՀՀ-ի, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունների զարգացմանը: Մասնավորապես, ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման շնորհիվ ՀՀ-ն կարող է ներառվել տարածաշրջանի նավթամուղային նախագծերում: Դրան ի պատասխան՝ Ռ. Քոչարյանը նշել է. «Ոչ մեկը չունի որևէ պատրանք, որ մենք կարող ենք զիջումներ անել այդ տարածաշրջանային նախագծերի կապակցությամբ»[27]:

Թուրքիայի և ՀՀ-ի միջև քաղաքական հարաբերությունների և դիվանագիտական շփումների համատեքստում բավական ուշագրավ էր 2000 թ. Կովկասում անվտանգության և կայունության մեխանիզմ հիմնելու շուրջ նամակագրությունը երկու երկրների նախագահների միջև: 2000 թ. հունվարին Վրաստան կատարած այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելը կոչ արեց ստեղծել Կովկասյան կայունության պակտ[28]: Այդ կապակցությամբ նա միջազգային հանրությանը կոչ արեց ուշադրություն դարձնել կովկասյան տարածաշրջանի վրա: Մի շարք երկրների նախագահներին, այդ թվում՝ ՀՀ նախագահին հղված նամակներում Թուրքիայի նախագահը նշում էր Կովկասում բազմակողմանի և հաստատուն համագործակցության առկա ներուժի մասին:

2000 թ. հունվարի 21-ին Ռ. Քոչարյանին հղած նամակում Թուրքիայի նախագահը, անդրադառնալով Վրաստանի և Ադրբեջանի նախագահների հետ հանդիպման արդյունքում Կովկասում կայունություն և խաղաղություն ստեղծելու հեռանկարների առնչությամբ ձեռք բերված պայմանավորվածություններին, գրել էր, որ Կովկասում որոշ հիմնահարցերի կարգավորված չլինելը ոչ միայն խոչընդոտում էր հարավկովկասյան տարածաշրջանում կայունության հաստատմանը, այլև ստվերի տակ էր թողնում այն հնարավորությունները, որոնք կարող էին օգտագործվել բազմակողմանի և ամուր համագործակցության մթնոլորտի զարգացման համար՝ ընդգծելով, որ դրանցից գլխավորը ԼՂ հիմնահարցն էր[29]:

2000 թ. փետրվարի 29-ին Ռ. Քոչարյանը պատասխան նամակ ուղարկեց Թուրքիայի նախագահին, որտեղ ՀՀ նախագահը, դրական համարելով տարածաշրջանում անվտանգության կարգավորման որոշակի ձևեր ստեղծելու գաղափարը և ընդգծելով խաղաղության և կայունության համար առկա տարածաշրջանային գործընթացների կառուցողական չլինելը, առաջարկեց 3+3+2 կարգավորման

---

[27] *Մեդիամաքս գործակալություն, 26.11.1999:*

[28] *Ավելի մանրամասն տե՛ս* **Emerson M., Prokhorova E. and Tocci N.** *A Stability Pact for the Caucasus in Theory and Practice (Journal of Southeast European and Black Sea Studies, Vol.1, No. 3, 2001, pp.115-147);* **Çelikpala M.** *From a Failed State to a Weak One? Georgia and Turkish-Georgian Relations (The Turkish Yearbook, Vol. XXXV, 2005, p. 190).*

[29] *ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուց. 6, գ. 63, էջ 9-10:*

բանաձևը, որը կներառեր կովկասյան երեք երկրների ներկայացուցիչներին, երեք հարևան երկրներին, ինչպես նաև Եվրամիությանը և Միացյալ Նահանգներին[30]:

Նամակագրության շրջանակներում բավական ուշագրավ էր 2000 թ. մայիսի 4-ին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի՝ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին ուղարկած նամակը, որտեղ Թուրքիայի նախագահը, բարձր գնահատելով ՀՀ նախագահի աջակցությանը տարածաշրջանում խաղաղությունը և կայունությունը խթանելու և ամրապնդելուն ուղղված գաղափարին, վստահություն էր հայտնում, որ կհաջողվի գտնել Կովկասում հարատև խաղաղության և կայունության պահանջներին անհրաժեշտ հիմնական պարամետրերը՝ շեշտելով, որ տարածաշրջանում վստահելի բազմակողմանի համագործակցության մեխանիզմ ունենալու գլխավոր նախադրյալը գոյություն ունեցող հակամարտությունների և մասնավորապես ԼՂ հակամարտության կարգավորումն է[31]:

1998 թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո հայ-թուրքական հարաբերություններում պաշտոնական Երևանի դիրքորոշման մեջ առաջ քաշվեց Հայոց ցեղասպանության խնդիրը: Ի տարբերություն Լ. Տեր-Պետրոսյանի՝ ՀՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը ներառեց արտաքին քաղաքականության գերակա խնդիրների շարքում, որի մասին առաջին անգամ հրապարակավ ելույթ ունեցավ 1998 թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի ամբիոնից: Նա մասնավորապես նշեց. «Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թ. ցեղասպանությունն իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել... Այս չարիքի դեմ պայքարի անհրաժեշտության հարաճուն ըմբռնման վկայությունն են նաև ներկա դարասկզբին հայերի ցեղասպանության դատապարտումն ու ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից»[32]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը ՀՀ արտաքին քաղաքականության մեջ ներառելը ցավագին ընդունվեց Թուրքիայում: Ցեղասպանության իրողության հերքման խնդիրը թուրքական իշխանությունների օրակարգի հարց դարձավ: Ցեղասպանության ճանաչման պահանջների վերացումը ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավման համար Թուրքիայի առաջ քաշած նախապայմաններից մեկն է: Բնականաբար, այս հարցում թուրքական իշխանությունների մտավախության հիմքում հիմնականում ընկած են միջազգային տարբեր ատյաններում ու արտասահմանյան խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ քննարկումները:

---

[30] ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուց. 6, գ. 64, էջ 3-4:

[31] ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուց. 6, գ. 63, էջ 20-21:

[32] **Անանյան Ա.,** Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Ե., 2004, էջ 9:

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն առանձնապես արդիական դարձավ 2000 թ. հոկտեմբերի 3-ին, երբ Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովում ընդունվեց Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձև, որտեղ ոչ միայն հստակ փաստեր էին ներկայացվում Հայոց ցեղասպանության վերաբերյալ, այլև կոչ էր արվում ԱՄՆ-ի նախագահին Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված ամենամյա ուղերձներում 1.5 միլիոն հայերի կանխամտածված ոչնչացումն անվանել ցեղասպանություն[33]: Այդ առնչությամբ Թուրքիայի խորհրդարանի 5 խմբակցություններ հատուկ հայտարարություն հրապարակեցին, որում նշվում էր թուրքական կողմից պատասխան քայլեր ձեռնարկելու հնարավորության մասին, մասնավորապես, թուրք խորհրդարանականներն սպառնում էին արգելափակել Ինջիրլիք ռազմակայանի օգտագործումը ամերիկացիների կողմից[34]:

Հոկտեմբերի 3-ի երեկոյան Թուրքիայի նախագահ Սեզերը, հեռախոսազրույց ունենալով ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնի հետ, շեշտել էր Կոնգրեսում օրինագծի անցկացման դեմ ԱՄՆ-ի վարչակազմի ջանքերի մոբիլիզացման և արդյունավետության մեծացման անհրաժեշտությունը ու խնդրել էր Բ. Քլինթոնին անձնական մասնակցություն ցուցաբերել այդ գործում[35]:

Թուրքական այս սպառնալիքները որոշակի ազդեցություն ունեցան առաջին հերթին ԱՄՆ-ի գործադիր իշխանության վրա: 2000 թ. հոկտեմբերի 19-ին Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստից առաջ Դ. Հասթերթը նիստի օրակարգից հանեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևը[36]:

ԱՄՆ Կոնգրեսում այս հարցի արծարծումը և դրան զուգորդող քաղաքական-դիվանագիտական անցուդարձը Թուրքիայի քաղաքական վերնախավի առաջ դրեցին Հայոց ցեղասպանության կամ, ինչպես Թուրքիայում են անվանում, «Հայկական հարցի» առն-չությամբ նոր մոտեցումներ ձևավորելու խնդիրը: 2000 թ.

---

[33] *United States. Congress. House. Committee on International Relations. Affirmation of the United States Record On the Armenian Genocide Resolution: Report Together With Dissenting Views (to Accompany H. Res. 596). [Washington, D.C.: U.S. G.P.O., 2000, http://babel.hathitrust.org/cgi/pt?id= pur1.32754070183128; Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, 2003, док. 1459;* **Պողոսյան Բ.,** *Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Ե., 2011, էջ 23:*

[34] **Մարուքյան Ա.,** *Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Ե., 2015, էջ 128:*

[35] **Schmitt E.** *The 2000 Campaign: The House Races; Republican's Unusual Gift: A Vote on the House Floor, The New York Times, October 7, 2000, http://www.nytimes. com/2000/10/07/us/2000-campaign-house-races-republican-s-unusual-gift-vote-house-floor.html; Status of House Resolution 398/596, Armenian News Network/Groong, http://www.groong.org/hres398/index.html;* **Բարսեղյան Լ.,** *Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Ե., 2001, էջ 41-44:*

[36] **Մարուքյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 129:*

աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում ընդունվեց երկու կարևոր որոշում. առաջին՝ Հայոց ցեղասպանության հարցը համարվեց Թուրքիայի ազգային անվտանգությանն առնչվող խնդիր, և երկրորդ՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվեց ամեն կերպ խոչընդոտել ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ընդունման քննարկումը[37]:

Անկարայի արձագանքները շատ ավելի խիստ էին Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո: 2001 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի Սենատի՝ Հայոց ցեղասպանության օրինագծի ընդունումը, ինչպես նաև հունվարի 29-ին Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի կողմից վերոհիշյալ օրինագիծը վավերացնելը[38], խիստ դժգոհության ալիք բարձրացրին Թուրքիայի ղեկավար շրջանակներում: Այդ կապակցությամբ իրենց դժգոհությունը հայտնեցին Ա. Սեզերը, Թուրքիայի վարչապետ Մ. Յըլմազը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ[39]:

Ակնհայտ է, որ Թուրքիայի իշխանությունները ոչ միայն չեն մեղմել Հայոց ցեղասպանության իրողության ժխտման պետական քաղաքականությունը, այլև հետևողականորեն փնտրել են նոր ուղիներ այդ քաղաքականության կենսագործման համար: Այսպես, 2000 թ. աշնանը–2001 թ. ձմռանը, երբ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն աննախադեպ թափ էր հավաքել, Թուրքիայի վերնախավը սկսեց լրջորեն ուսումնասիրել իրավական հարթության մեջ հարցը մերժելու հնարավորությունները: 2000 թ. սեպտեմբերի 29-ին ժխտման «միջազգային-իրավական» մի նոր միտումի քննությունը դարձավ Թուրքիա յի ԱԱԽ նիստի օրակարգի առաջին հարց: Հարցը քննարկման էր դրել Բ. Էջեվիթի ղեկավարած կոալիցիոն կառավարությունը՝ իբրև «հայերի պնդումների դեմ պայքարի միջոցների քննարկում»: Ընդունվեց մի որոշում, որը, մամուլին հասած կցկտուր տեղեկությունների համաձայն, ձևակերպվում էր որպես «փուլ առ փուլ անհրաժեշտ միջոցների ձեռնարկում», նշվում էր, որ հիշյալ միջոցների ավելի ներգործուն լինելը կախված է դեպքերի զարգացումից[40]:

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո սկզբունքորեն վերանայվեց շատ երկրների արտաքին քաղաքականությունը: Ահաբեկչության դեմ պայքարում Թուրքիայի ստանձնած կարևոր դերը մեծապես

---

[37] **Սաֆրաստյան Ռ.,** *«Հնարավոր չէ XXI դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...», Ե., 2003, էջ 41:*

[38] **Karagueuzian S. H., Auron Y.** *A Perfect Injustice: Genocide and Theft of Armenian Wealth, New Brunswick, NJ: Transaction Publishers, 2009, p. 14; France Law no. 2001-70 of January 29, 2001, relating to the recognition of the Armenian Genocide of 1915; 29.01. 2001,* **Schrodt N.** *Modern Turkey and the Armenian Genocide: An Argument about the Meaning of the Past, Cham, Switzerland, Springer, 2014, p. 17.*

[39] *French Parliament Adopts Genocide Bill, 18.01.2001, http://asbarez.com/44341/ french-parliament-adopts-genocide-bill/.*

[40] **Սաֆրաստյան Ռ.,** *Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT ID=491.*

բարձրացրեց նրա աշխարհաքաղաքական նշանակությունը՝ Արևմուտքի համար այդ երկիրը դարձնելով իսլամական արմատականության և ահաբեկչության դեմ պայքարում կարևորագույն աջակիցներից մեկը: Թուրքիայում շատ լավ գիտակցում էին, որ 2001 թ. հունվար-փետրվար ամիսներին երկիրը ցնցած տնտեսական ճգնաժամն ահաբեկչ թյան դեմ պայքարում ԱՄՆ-ի հետ համագործակցության միջոցով հաղթահարելու իրական հնարավորություններ էին առաջացել: «Միլլիյեթ» օրաթերթն Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից Թուրքիային 14 մլրդ դոլար վարկի տրամադրումն ուղղակիորեն կապել է հակաահաբեկչական պայքարում Թուրքիայի ունեցած «հանգուցային նշանակության հետ»[41]:

Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում և մամուլում ակտիվ քննարկվում էր այն, որ Թուրքիայի նշանակության աճն իր ուղղակի ազդեցությունն էր ունենալու տարածաշրջանային զարգացումների, մասնավորապես հայ-թուրքական հարաբերությունների և ԼՂ հիմնահարցի վրա[42]: Դա էր վկայում այն փաստը, որ 2002 թ. հունվարի 29-ին Թուրքիայի նախագահի նախագահությամբ տեղի ունեցած ԱԱԽ 2002 թ. առաջին նիստի ժամանակ հատուկ քննարկման էր արժանացել նաև ՀՀ-ի հետ տնտեսական հարաբերությունների հարցը: Ըստ «Ջումհուրիյեթ» օրաթերթի՝ ԱԱԽ-ն մեկ անգամ ևս նշել էր, որ ՀՀ-ի հետ հարաբերությունների զարգացումը կապված էր երկու նախապայմանների՝ գրավված ադրբեջանական հողերից հայկական ուժերի հետքաշման և Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջներից հրաժարվելու հետ[43]:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ կարող ենք նշել.

1. 1990-ականների երկրորդ կեսին ՀՀ-ի հետ փոխհարաբերություններում Թուրքիայի քաղաքական դիրքորոշման մեջ որոշակի փոփոխություն նկատվեց: Թուրքիան ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորման հայտարարություններ էր անում և համապատասխան փորձեր ձեռնարկում:

2. Թուրքիայի նման դիրքորոշման կարևոր դրդապատճառներից էր Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի ուժեղացումը: Դրա հետևանքով կասկածի տակ դրվեցին Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցությանը հակակշռելու և հայ-ադրբեջանական հակամարտությունում որոշիչ դեր խաղալու Թուրքիայի հնարավորությունները:

3. Հայ-թուրքական մերձեցման միտումները որևէ էական արդյունքի չհանգեցրին: Ինչպես նախկինում, այնպես էլ 1990-ականների երկրորդ կեսին Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմա-

[41] Milliyet, 20.02.2002.
[42] Yeni Safak, 16.01.2002.
[43] Cumhuriyet, 01.02.2002.

նավորել հիմնականում ադրբեջանական գործոնով և ԼՂ հիմնահարցի կարգավորված չլինելով, միաժամանակ ջանալով պահպանել երկկողմ շփումները և երկխոսության հնարավորությունները:

4. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի խնդիր է: Դրանով մի կողմից միջազգային հանրությունը վերջապես արդարացի գնահատական է տալիս դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված զարհուրելի ոճրին ու փորձում քավել մեղքի իր մասը՝ ժամանակին իրողություններին անտարբեր վերաբերմունք ցուցաբերելու պատճառով հայ ժողովրդի կրած զրկանքների ու կորուստների համար, մյուս կողմից՝ ուժեղանում է ճնշումը Թուրքիայի նկատմամբ, որպեսզի վերջինս վերանայի համամարդկային արժեքների ու մի անմեղ ժողովրդի հանդեպ ժամանակին գործած իր հանցանքի նկատմամբ սեփական վերաբերմունքը:

5. Այսօր ևս օտար պետությունները, բարձրացնելով Հայկական հարցը միջազգային տարբեր ատյաններում, շարունակում են առաջնորդվել սեփական շահերով, որոնցից էլ կախված են մնում հայ-թուրքական հարաբերությունները: Հենց սա է պատճառը, որ ՀՀ-ն ստիպված է մեծ զգոնություն ու զգուշություն ցուցաբերել միջազգային ատյաններում Հայոց ցեղասպանության իրողության քննարկումներին:

6. Ակնհայտ է՝ Հայոց ցեղասպանության միջազգայնացումը Թուրքիան ընկալում է որպես իրական վտանգ: Դրա դեմ պայքարը նրա արտաքին քաղաքականության օրակարգում է՝ առաջնային խնդրի վերածվելու և հայ-թուրքական հարաբերություններում ԼՂ հիմնահարցը հետին պլան մղելու պոտենցիալ հնարավորությամբ:

7. Մյուս կողմից ակնհայտ է դառնում, որ Թուրքիան արագ հակամիջոցներ է կիրառում այս խնդրի միջազգայնացումը կանխելու համար՝ արդեն իսկ համախմբելով ու արդյունավետ դարձնելով աշխարհում սփռված թուրքական համայնքների ու կազմակերպությունների աշխատանքները, ինչպես նաև որոշակի քայլեր պահանջելով թուրքամետ ուժերից՝ մասնավորապես հրեական լոբբիից:

ТУРЕЦКО-АРМЯНСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ В 1995-2001 ГГ.

АРШАКЯН Г. М.

Резюме

Позиции России на Южном Кавказе укрепились после установления режима прекращения огня между конфликтующими сторонами в Карабахском конфликте в 1994 г. В результате Турция стала предпринимать шаги по улучшению отношений с Арменией. В ответ на это власти РА активизировали армяно-турецкие политические и дипломатические

контакты. Однако наметившееся армяно-турецкое сближение не привело к каким-либо существенным результатам.

Турция продолжала связывать армяно-турецкие отношения с азербайджанским фактором и нерешенностью Карабахского конфликта, пытаясь в то же время сохранить двусторонние контакты и возможности диалога. Правящие круги весьма негативно отнеслись к смене власти в Армении в 1998 г., поскольку власти РА выдвинули вопрос о признании геноцида армян. В отличие от Л. Тер-Петросяна новоизбранный президент РА Р. Кочарян включил вопрос международного признания и осуждения геноцида армян в число приоритетных вопросов внешней политики.

TURKISH-ARMENIAN RELATIONS IN THE CONTEXT OF TURKEY'S REGIONAL POLICY IN 1995-2001

G. ARSHAKYAN

Abstract

In 1994 after the truce signed between the conflicting parties in Karabakh issue the position of Russia in the South Caucasus strengthened putting into doubt Turkey's chances to play a decisive role in the Armenian-Azerbaijani conflict and to counterbalance Russia's influence in the South Caucasus. As a result, Turkey started to take steps to improve the relations with Armenia, towards which the armenian authorities also took steps and, consequently, the Armenian-Turkish political and diplomatic contacts were activated. Despite this, the Armenian-Turkish convergence trends had no significant result. Turkey continued to consider that the Armenian-Turkish relations depended mainly on the Azerbaijani factor and unregulated Karabakh conflict, at the same time trying to maintain bilateral contacts and dialogue opportunities. The Turkish authorities showed a negative attitude to the power change of 1998 after which the issue of the Armenian Genocide was raised in the position of official Yerevan in terms of the Armenian-Turkish relations. Unlike L. Ter-Petrosyan, the newly elected RA President, R. Kocharyan, included the international recognition and condemnation of the Armenian Genocide into the priorities of the foreign policy.